

3
Բ Ա Յ Լ Շ Ե Վ Ի Կ Յ Ա Ն
Յ Ե Ր Ր Ո Ր Դ
Գ Ա Ր Ն Ա Ն Ա Յ Ա Ն

633.5

4-29

Այր

Ս. ԿԱՐԱԳՅՈՒԼՅԱՆ

ՑԱՆԵՆՔ ԲԱՍԲԱԿԻ
ՏԵՍԱԿԱՎՈՐ ՍԵՐՍԵՐ

633.5

4-29

Գ Ե Տ Գ Ր Ա Տ

1932

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

ՅԱՆՆԵՔԻ ԲԱՄԲԱԿԻ ՏԵՍԱԿԱՎՈՐ ՍԵՐՄԵՐ

Բայնընդմիջ 3-րդ դարնանացանի հիմնական խնդիրներից մեկն էլ բարձր վորակի և մեծ քանակի բերք ստանալն է:

Բերքատվության բարձրացման համար անհրաժեշտ է մի շարք պայմանների ճիշտ կիրառում: Այդ պայմաններն են՝ աշխատանքի ճիշտ կազմակերպումը, լավ վորակի և ժամանակին արած վարը, մեքենաների նպատակահարմար ոգտագործումը, սերտացվի ընտրությունը, ցանքը ժամանակին և խնամքով կատարելը, պարարտանյութերը նպատակահարմար ոգտագործելը պայքարը մոլախոտերի և հիվանդությունների դեմ, ցանքերի կանոնավոր խնամքը և այլն:

Բույսերի կանոնավոր և լավ զարգացման համար վճռական նշանակություն ունի հիշյալ անհրաժեշտ պայմանները ճիշտ կիրառումը: Յերբեք լավ բերք չենք ստանա, չեթե բույսերի լավ զարգանալու համար պահանջվող պայմաններից միքանիսը աչքաթող անենք, չեթե նույնիսկ ֆնացած պայմանները ճիշտ և իր ժամանակին կատարենք:

Այսպես որինակ՝ չեթե ցանքսը կատարել ենք անխնամ կամ անժամանակ և կամ ցանել ենք վատ վորակի սերմեր, ապա վրքան էլ հետագայում մեծ

ուշադրություն դարձնենք մյուս աշխատանքներ վրա, լավ խնամենք, կանոնավոր ջրենք, լավ պայքարենք մոլախոտերի դեմ և այլն, միևնույն է, չենք ստանա այն արդյունքը, վոր կարող էլինք ստանալ պահանջվոլ բոլոր պայմանները ճիշտ կիրառելու դեպքում:

Այժմ, սոցիալիստական հիմունքներով վերակառուցվող գոլգոլում, շնորհիվ խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների ու մեքենատրակտորային կայանների, մենք ունենք բոլոր հնարավորությունները՝ բերքատվության բարձրացման համար անհրաժեշտ բոլոր պայմանները կիրառելու և հետևաբար մեծ արդյունք ստանալու համար: Մակաջն շատ հաճախ մեզ մոտ այս կամ այն անհրաժեշտ պայմանն աչքաթող է արվում, վորն ուժեղ չափով աղղում է բերքատվության վրա:

Մինչև այժմ հարկ յիղած ուշադրություն չեք դարձվում նաև բամբակի սերմացվի վրա:

Բերքի բարձրացման խնդրում, մյուս պայմանների հետ միասին, կարևոր նշանակություն ունի նաև սերմացվի ընտրությունը:

Բույսերի բոլոր տեսակներն էլ ունեն զանազան սորտեր, վորոնք տարբերվում են իրարից բերքատվության քանակով, բերքի վորակով, հասունացման շրջանով և այլն:

Լավ սորտից ստացվում է նաև լավ բերք՝ իր լավ հատկություններով, այստեղ, իհարկե, նշանակություն ունեն նաև սվյալ շրջանի կլիմայական և հողային պայմանները:

Բամբակենու տեսակները նույնպես ունեն բազմաթիվ սորտեր, վորոնք նույնպես իրարից տարբերվում են հասունացման շրջանով, բերքի քանակով, վորակով և այլ հատկություններով:



15483-52

173 332
Սորհրդային միութեան մեջ կան հատուկ հիմնարկներ (փորձադաշտեր, սելեկցիոն կայաններ), վորոնք ուսումնասիրում են բամբակի տեսակները, նրանց սորտերը և աշխատում են ստանալ բամբակի այն-պիսի սորտեր, վորոնց բերքը թե՛ քանակով և թե՛ վորակով բարձր լինի և մեր շրջանների կլիմայական պայմաններին համապատասխան:

Ամեն մի բամբակագործական շրջանում չի կարելի բամբակի պատահական սորտը մշակելը, վորովհետև կան աշխարհի սորտեր, վորոնք ուշահասն և հնարավոր չեն սովորական ձևով մշակել այն շրջաններում, վորտեղ ցրտերը շուտ են ընկնում:

Սորհրդային Միութեան բամբակագործական շրջաններում մշակվում և զլխավորապես ամերիկական տեսակի բամբակներն Այս բամբակներն նույնպես ունի շատ սորտեր, վորոնք նույնպես իրանց հասունացման շրջանով, բերքատվութեամբ և այլ հատկութեաններով տարբերվում են իրարից:

Մեզ մոտ, Սորհրդային Հայաստանում, բամբակագործական շրջաններում մշակվում են ամերիկական բամբակի, մեծ մասամբ, «Կինգ» և «Նավրոցկի» սորտեր, վորոնք համապատասխանում են մեր շրջանների կլիմայական և հողային պայմաններին:

Սակայն մինչև այժմ անուշադրութեան եր մատնված այն խնդիրը, թե՛ այդ սորտերից վորը և մեր վոր շրջանում կամ շրջանի վոր հողամասերում կարելի չե մշակել: Մեզ մոտ ցանվող սերմերը միշտ ել խառն են լեղել զանազան սորտերի սերմերով: Այդպիսի սերմացուն կամ, ինչպես ասում են, «Գործարանային խառնուրդը» («զավոդսկայա սմես») բաղկացած և

«Կինգ»-ի և, «Նավրոցկու» «№ 182» և մի շարք այլ սորտերի սերմերից: Պարզ ե, վոր նման խառնուրդը լերերը չի կարող հավասարաչափ զարգացող բամբակի բույսեր տալ, վորովհետև ինչպես ասացինք, ամեն մի բամբակի սորտ տարբերվում է մյուսից իր հասունացման շրջանով և այլ հատկութեաններով: Այդպիսի ցանքի հետևանքը լինում է այն, վոր նրանցից մի մասը ուշ է ծաղկում և ուշ ել բերք է տալիս. իսկ այն շրջանները, վորտեղ ցրտերը շուտ են ընկնում, այլ խոսքով՝ տարվա ընթացքում տաք օրերի թիվը համեմատաբար քիչ է, այդպիսի շրջաններում հիշյալ սերմացվի մեջ գանվող ուշ հասնող տեսակները բերքը չեն հասցնում և շատ քիչ արտադրանք և ստացվում: Իացի բերքի քանակից, այս դեպքում բերքի վորակն ել շատ ցածր է լինում: Այդպիսի սերմացվից ստացված բամբակի թելերը միատեսակ չեն լինում: Նրանցից մեկը լինում է հաստ և կարճ, մի ուրիշը՝ բարակ ու լերկար, իսկ մեկի զանգուրները շատ են լինում, մյուսինը՝ քիչ, ուստի հետագայում այդպիսի բամբակից ստացվող գործվածքներն ել վատ վորակի լին լինում:

Մաքուր սորտերից, այսինքն միայն մի բամբակի սորտի սերմերից, որինակ՝ միայն «Նավրոցկու» կամ միայն «Կինգի» սերմերը ցանելիս, միահավասար ցանք կստացվի: Ամբողջ դաշտում բամբակի բույսերը հավասար կզարգանան, միաժամանակ կսկսեն ծաղկել և միաժամանակ ել կհասունանան: Այս դեպքում բամբակի թե՛ բերքը և թե՛ վորակը բարձր կլինի:

Բամբակներու մի սորտի սերմեր ցանելու դեպքում ստացվող բամբակի թելերն իրանց հասունութեամբ և լերկարութեամբ միատեսակ կլինեն: Այս պատճառով

ուով ել այդպիսի բամբակից ստացվող գործվածքներն
ավելի լավ վորակի կլինեն, քան թե խառն սերմերից
ստացվող բամբակի գործվածքները: Մաքուր սորտի
սերմացուն նաև այն առավելութունն ունի, վոր
նկատի ունենալով այդ սորտի հատկութունները՝
հնարավոր է նրանց մշակել այն շրջաններում կամ հո-
ղամասերում, վորոնց պայմանները նպաստավոր են հիշ-
յալ սորտերի համար:

Մաքուր սորտի սերմացու ստանալու համար, սո-
վորաբար, հավաքում են բամբակի սորտի ավելի քա-
նոցը և ավելի մեծ բերք տվող բույսերի սերմերը:
Նկատի չե առնվում նաև կնգուղների տեսակները: Սեր-
մացու վերցվում է այն կնգուղներից, վորոնք ավելի
խոշոր են և ավելի մեծ յեղանք ունեն:


Այս աշխատանքը կատարվում է հատուկ հիմնարկ-
ներում: Այդ հիմնարկներում միջանի տարվա ընթաց-
քում (մոտ 4—5 տարի) բամբակի վորեն սորտից
ստանում են մի տեսակի և լավ վորակի սերմացու,
վոր հետագայում տրվում է բամբակագործական շրջան-
ներին: Անդրկովկասում, Գյանջալի բամբակի սեյկե-
ցիոն կայանում ամեն տարի բամբակի լավ սորտերից
ընտրում են ամենալավ բամբակներն և նրանց սեր-
մերը կախանի հողամասերում ցանում: Միջանի տարի
իրենց մոտ վորոշ ձևերով մշակելուց հետո ամենալավ
սերմերը հանձնում են բամբակագործակա- ն հատուկ
անտեսութունների այն տանքը շարունակելու հա-
մար: Յե՛վ չե՛րբ հարկաբժ սերմերի այս կամ այն սորտը
համապատասխանում է մի քանի անալիզի արդյունքից
հետո միայն այս, վոր պես մաքուր սորտ,
տրվում է կոլխոզներին:

Սակայն այս ճանապարհով ստացված սերմացվի
քանակը վորքան էլ շատ լինի, դարձյալ չի բավարա-
րի բամբակագործական բոլոր շրջաններին, այս պատ-
ճառով էլ առաջին տարին այդ սերմերը տրվում են
մեկ շրջանի, կամ ընդամենը մի քանի գյուղերի, իսկ
չերկերրդ տարին այդ գյուղերում մշակվող սորտից
այնքան սերմացու չե ստացվում, վոր հնարավոր է լի-
նում մյուս շրջաններին էլ տալ:


Որինակ՝ մեկ մոտ այս տարի «Կենգ» բամբակի
№ 492 մաքուր սորտի սերմացուն բաղմացնելու համար
Վաղարշապատի շրջանի Արբատ, Գյուլբումբեթ, Ավա-
տաշեն, Խաչափարախ, Զաֆարաբատ և Փարաքար
գյուղերում միայն այդ բամբակից և մշակվելու: Իսկ
մյուս տարի այդ գյուղերից ստացված ընուցն սորտի
բամբակից ա նքան սերմ կստացվի, վոր հնարավոր
կլինի տալ նաև մյուս այն բամբակագործական շրջան-
ներին, վորտեղ ձևնառու կլինի այն մշակել:

Այս խնդրին ամեն մի կոլտնտեսական ու չքա-
վոր միջակ բամբակագործ պետք է գիտակցաբար վե-
րաբերվի, վորպեսզի նախորդ տարվանից մնացած,
կամ այս տարի այդ գյուղում պատահմար ստացված
վատ վորակի սերմեր չխառնվեն մաքուր սորտի հետ,
հակառակ դեպքում դարձյալ կստացվի սերմացվի
նույն խառնուրդը, ինչ վոր մինչև այժմ եր և, հետևա-
բար, բերքն էլ անհաջող կլինի: Բացի դրանից, վոր-
պեսզի բամբակի գործարանները փարոզանան բամբա-
կագործական շրջաններին մաքուր սորտի սերմեր
արամագրել, անհրաժե տ է, վոր գործարանին հաճնած
հյ գավոր օտմբակը մաքուր սորտի լինի, ալլապսս հը-
նեկարավորութուն չի լինի ամեն տարի մաքուր սորտի
սերմացու տրամադրելու ցանքի համար:


Սերիկեցիոն կալաններում մաքուր սորտերից ընտրութեան միջոցով ստացվող սերմացուն կոչվում է տեսակավոր սերմացու:



Տեսակավոր բամբակենու կնգուղը:



«Գործարանային խոնուրդ»-ից ստացված բամբակենու կնգուղը:



Տեսակավոր բամբակենու թելերը:



«Գործարանային խոնուրդ»-ից ստացված բամբակի թելերը:

Այսպիսով, բամբակից լավ բերք ստանալու համար, մյուս բոլոր անհրաժեշտ պայմանների հետ միասին պետք է նաև ցանկ տեսակավոր սերմացու, վորն, ինչպես ասեցինք, մեծ չափով ն գաստում է բերքի բարձրացմանը:

Արդեն ասել ենք, վոր մեզ մոտ գլխավորապես մշակվում են «Կինգ» և «Նավրոցկի» սորտերը, վորոնցից «Կինգ»-ը համարվում է վահանաս սրտ: Նա մոտ 110 որվա ընթացքում սկսում է հասունանալ «Կինգ» -ից զուտ բամբակ ստացվում է 30-ից 32, տոկոս, այսինքն 100 կիլոգրամ բերքից զուտ բամբակ (առանց սերմի) ստացվում է մոտ 30—32 կիլոգրամ, վոր համարվում է լավ յելանք*):

Թելի յերկարութունը մոտավորապես հավասար է 26—27 միլիմետրի (սովորաբար բամբակի թելերի 25—27 միլիմետր յերկարութունը համարվում է միջակ յերկարութուն):

Բամբակի այս սորտը, շնորհիվ իր վաղահասութեան և բավարար բերքատվութեան, մեզ մոտ բոլոր բամբակագործական շրջաններում էլ հնարավոր է մշակել: Մակախ մեր այն շրջաններում, վորոնց կլիմայական պայմանները հնարավորութուն են տալիս մշակել այնպիսի սորտեր, վորոնք համեմատած «Կինգ» սորտի հետ, այլելի ուշ են հասնում, բայց ավելի բերք տալիս, պարզ է վոր, ավելի ձեռնտու չե այդ շրջաններում մշակել նման սորտեր: Այսպես որինակ՝ մեր մի քանի բամբակագործական շրջաններում կարելի չե մշակել «Նավրոցկի» սորտը, վոր հասունանալու համար

*) Բամբակի յելանք կոչվում է հունդավորից ստացված մաքուր բամբակը:

ավելի շատ տաք որեր և պահանջում, քան «Գինգ»-ը, բայց բերքն էլ ավելի շատ և լավ վորակի յե լինում:

«Նավթոցկին» հասունանալու համար պահանջում է միջին հաշվով մոտ 120 որ, այսինքն մոտավորապես 10 որ ավելի, քան «Գինգ»-ը: Այս պատճառով էլ այն շրջաններում, վորտեղ ցրտերը համեմատաբար ավելի շուտ են ընկնում, ձեռնտու չի մշակել «Նավթոցկին» բամբակը: Բացի դրանից շատ ուժեղ կամ խոնավությամբ հարուստ հողերում «Նավթոցկու» հասունացման շրջանը յերկարում է, ուստի և պետք է խուսափել այդպիսի հողերում «Նավթոցկին» մշակելուց: Գարնան վարի ժամանակ պետք է առաջին հերթին վարել այն հողերը: վորոնց վրա նախատեսված է ցանել «Նավթոցկին»: Ցանքսի ժամանակ պետք է առաջին հերթին «Նավթոցկին» ցանել ինկատի ունենալովներս ուշ հասունանալու հարգամանքը: «Նավթոցկու» ու լիանքը հավասար է մոտ 33 տոկոսի: Թելի յերկարությունը մոտավորապես հավասար է 27—28 միլիմետրի: «Նավթոցկու» կնգուղները սովորաբար ավելի մեծ են լինում, քան «Գինգ»-ի կնգուղները: Ծնորձով կնգուղների մեծության բամբակն ավելի հեշտ է հավաքվում և բերքի քանակն էլ ավելի շատ է լինում:

«Նավթոցկին» «գործարանային խառնուրդի» համեմատությամբ 15—20 տոկոսով ավելի շատ բերք է տալիս: Սերմերը բավականին խոշոր են և ունեն առատ մազմզուկներ, գույնը մեծ մասամբ սպիտակավուն է:

Նկատի ունենալով տեսակավոր բամբակի մեծ առավելությունները, խորհրդային Հայաստանի Հող ժողովմաստի տնտեսական բույսերի սեկտորի կողմից հազմակերպված խորհրդակցությունը, բամբակի սոր-

տերի շրջանացման նկատմամբ, հետևյալ վորոշումն է կայացրել:

Այս տարվա մշակվելիք 30.000 հեկտար բամբակի տարածությունից վեղի—Բասարի շրջանում՝ բամբակին հատկացված է 1700 հեկտար հողամասերում ցանել միայն «Նավթոցկին» սորտի սերմեր: Ղուրղուղուլու շրջանի Ծահրիար յենթաշրջանում (մեծ և վորք Ծահրիարները, Ջաֆարբատ, Գլապարբի և Մուլլաբալաբատ գյուղերում) նույնպես ցանել 4000 հեկտար «Նավթոցկին»:

Մյուս բամբակագործական շրջաններում առայժմ ցանել «Գինգ» և միևնույն ժամանակ կատարել համապատասխան ուսումնասիրություններ, վորպեսզի հետազայում, վորտեղ հնարավոր է, նույնպես մշակել «Նավթոցկին» սորտը: Բացի դրանից՝ Վաղարշապատի շրջանի 6 գյուղերում մշակել «Գինգի» № 492 տեսակավոր սորտը: Այսպիսով կարճ ժամանակամիջոցում հնարավոր է մեր բամբակագործական շրջաններում մշակել մաքուր սորտեր, վորոնց առավելություններին մենք արդեն ծանոթացանք:

Խորհրդային ու կոլտնտեսությունները պետք է է մեծ ուշադրություն դարձնեն այս խնդիրները վրա:

Բանն այն է, վոր յիժի մաքուր արտի սերմացուն թեկուզ անգամ այլ սերմերի հետ է խառնվում, ապա և այն նորից տեսակավորելու համար յերկար ժամանակ և մեծ տըխատանք է պահանջվում: Հիշելով այս և նկատի ունենալով տեսակավոր սերմերի մեծ նշանակութունը, պետք է ուշադիր լինել, վորպեսզի այդ սերմացունները չխառնվեն «գործարանային» կամ այլ սերմերի հետ:

2288



« Ազգային գրադարան »



NL0288668

19.179

ՀԱՅԿ ՀՈՂԺՈՂԿՈՄՍՅՑ

ԳՅՈՒԻ ՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՏՆԵԼԻ ԳՐԱԳՐԱՆ
№ 54 (154) № 54 (154)

ԳԻՆԸ 10 ԿՈՊ. (1 ռ.)



С. КАРАГЕЗЯН

СЕЯТЬ ЧИСТОСОРТНЫЕ СЕМЕНА ХЛОПКА

Госиздат ССР Армении
Эривань — 1932

Գրավիճակ № 7151 (Բ) Հրատ. № 2111 Պատվեր № 729 Տիրած 3000
Պետերատի տպարան, Յերևան